ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն.

1) ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, հայ անվանի քանդակագործ Հովհաննես Բեջանյանի և նրա որդու՝ անվանի քանդակագործ Դավիթ Բեջանյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.5 հասցեում փակցնելու վերաբերյալ,

2) Հայ անվանի դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Ղարաբեկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սպենդիարյան փողոց հ.5 հասցեում փակցնելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, հայ անվանի քանդակագործ **Հովհաննես Կարապետի Բեջանյանը** ծնվել է 1915թ. հունվարի 15-ին Թիֆլիսում:

1923թ. ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1930թ. ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան 7-ամյա դպրոցը, 1941թ-ից սովորել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետտեխնիկումում: Այն ավարտելուց հետո ընդունվել է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն՝ որպես քանդակագործ, միաժամանակ ստեղծագործել է, ստեղծելով՝ կիսանդրիներ, քանդակներ, էսքիզներ:

1942թ-ից դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ:

1964թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը:

1967թ. արժանացել է ՀՍՍՀ վաստակավոր նկարչի պատվավոր կոչման:

Հ. Բեջանյանը ստեղծել է իր ժամանակի աշխատավոր ժողովրդի և մտավորականության իրատեսական մարմնավորումներ, արվեստի գործիչների մնայուն պատկերաքանդակներ. Սասունցի Դավիթ, Սայաթ-Նովա, Կոմիտաս, Ստեփան Շահումյան, Մեծ Հայրենականի հերոսների, մարտիկների կերպարներ ու դրվագներ: 1970թ. Երևանում տեղադրվել է քանդակագործի «Ջրավաճառ տղան» քանդակը, իսկ 1974թ-ին՝ «Ալեքսանդր Գրիբոյեդով» հուշարձանը, որոնք քարե վկայություններն են անվանի հայ արվեստագետի ստեղծագործության հարատևության:

Հովհաննես Բեջանյանը մահացել է 1976թ. փետրվարի 10-ին Երևանում:

Հայ անվանի քանդակագործ **Դավիթ Հովհաննեսի Բեջանյանը** ծնվել է 1944թ. հունվարի 9-ին Երևանում:

1950-1959թթ սովորել և ավարտել է Երևանի Չայկովսկու անվան պետական երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը:

1960-1964թթ սովորել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի քանդակի բաժնում:

1964-1969թթ՝ Երևանի Գեղարվեստաթաթերական ինստիտուտի քանդակի բաժնում:

1972թ-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է:

Հեղինակ է նաև տարբեր սիրված երաժշտական ստեղծագործությունների, երգերի, մեղեդիների: 1967-1970 թվականներին որպես դաշնակահար հանդես է եկել «Կռունկ», 1971-1978թթ՝ «Սերպանտին» վոկալ-գործիքային անսամբլներում, հեղինակ է մի շարք էստրադային երգերի («Կաբարե», «Սպասում եմ քեզ», «Աշնանային մեղեդի», «Ամեն վայրկյան» և այլն):

1972-1990 թթ մասնակցել է համամիութենական և միջազգային ցուցահանդեսների և մրցույթների:

1973 թվականից Դավիթ Բեջանյանը կերտել է բազմաթիվ մոնումենտալ հուշարձաններ, որոնք տեղադրվել են Երևանում և աշխարհի բազմաթիվ քաղաքներում: Նա հեղինակ է գեղարվեստական արժեք ներկայացնող բազմաթիվ ստեղծագործությունների՝ քարից, փայտից, մետաղից, բրոնզից, գիպսից՝ քանդակներ, հարթաքանդակներ, հուշակոթողներ, կիսանդրիներ («Հավերժության ժապավեն» (Երևան-Սևան խճուղի, 1979թ.), «Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև» (Քյոլնի հայկական եկեղեցի, 1992թ.), «Շնորհակալություն» (Բոնն, 1993թ.), «Քրիստոսը և 12 առաքյալները» (Լիոնի Սբ. Հակոբ եկեղեցի, 1994թ.), Առնո Բաբաջանյանի հուշարձան (Երևան, 2003թ.):

Դավիթ Բեջանյանը մահացել է 1911թ. փետրվարի 21-ին Երևանում:

ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, հայ անվանի քանդակագործ Հովհաննես Բեջանյանի և նրա որդու՝ անվանի քանդակագործ Դավիթ Բեջանյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.5 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Սաֆարյանի կողմից:

Հայ անվանի դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Արամ Վաչիկի Ղարաբեկյանը** ծնվել է 1955թ. հուլիսի 4-ին Թեհրանում: Երաժշտական կրթությունը ստացել է Թեհրանում՝ 1965-1973 թթ., այնուհետև սովորել է Բոստոնի (1973-1977թթ, ստեղծագործական դասարան), «New England» (1977-1979թթ, դաշնամուր) կոնսերվատորիաներում, որից հետո ուսումը շարունակել է Գերմանիայի Մայնց քաղաքում: Դիրիժորական արվեստ է սովորել Ֆրանկո Ֆերարայի մոտ: 1979 թ. Գերմանիայում եղել է հանրահայտ Սերջիու Չելիբիդակեի աշակերտը: Սովորել է նաև Յակոբ Դրուգմանի և Լեոնարդ Բերնսթայնի մոտ:

Արամ Ղարաբեկյանը եղել է Հայաստանի պետական կամերային նվագախմբի ղեկավարն ու դիրիժորը: 1983 թ. հիմնել է Բոստոնի «Սինֆոնովա» նվագախումբը, որը ղեկավարել է մինչ 1991 թ.:

Աշխատել է Կիևի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի հետ և միասին թողարկել է «Ռոմեո և Ջուլիետ» սկավառակը, որից հետո Ուկրաինայի մշակույթի նախարարը դիրիժորին նշանակել է իր գլխավոր խորհրդական: Ղեկավարել է նաև Ուկրաինայի ազգային սիմֆոնիկ նվագախումբը ու Օպերայի և բալետի թատրոնը: Աշխատել է նաև Զագրեբի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ որպես հրավիրված դիրիժոր: Հետագայում ղեկավարել է մի շարք նվագախմբեր՝ Հայաստանի և Ֆրեզնոյի ֆիլհարմոնիկ, Շրևեպորտի, Հանգչջոուի և Զեջիանգի սիմֆոնիկ:

1999 թ. ամանորի նախաշեմին 6 տարբեր երկրներից կազմված նվագախմբով հանդես է եկել նոր հազարամյակին նվիրված համերգային ծրագրով, Չինաստանի Հանչժոու քաղաքում, որտեղ ներկայացրել է Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան: 1988 թ. արժանացել է ամերիկյան կոմպոզիտորների, հեղինակների և խմբագիրների (ASCAP)

մրցանակին, 1989 թ.՝ Լյուսիեն Վուլսինի մրցանակին: Արժանացել է նաև Հարվարդի ասոցիացիայի երաժշտական մրցանակին, 2007 թ.՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչմանը:

ՀՀ նախագահի կողմից արժանացել էր Մովսես Խորենացու մեդալի՝ արվեստում ունեցած ներդրումների համար: Նա նաև Լուսիեն Վուլսինի ներկայացման, Կոմպոզիտորների հեղինակային իրավունքները պաշտպանող ամերիկյան ընկերակցության, Հարվարդի երաժշտական ընկերակցության լավագույն ներկայացման մրցանակների դափնեկիր էր:

Արամ Ղարաբեկյանը մահացել է 2014թ. հունվարի 11-ին ԱՄՆ-ում, թաղված է Երևանում:

Հայ անվանի դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Վաչիկի Ղարաբեկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սպենդիարյան փողոց հ.5 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա զարմիկի՝ Արմեն Ավագ Ավագյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ